

5.2.Ժողովրդագրական իրավիճակը 2001թ. հունվարի 1-ի դրությամբ

ՀՀ վարչատարածքային բաժանման համար հիմք է հանդիսացել 1995թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը, ըստ որի ՀՀ տարածքը բաժանված է 11 մարզի, ներառյալ Երևան քաղաքը մարզի կարգավիճակով (12 թաղային համայնքներով), 47 քաղաքային և 871 գյուղական համայնքների:

ՀՀ վարչատարածքային բաժանումը 2001թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

| Մարզեր | Համայնքների թիվը | | | |
|---------------------------|------------------|-----------|---------|-----------|
| | ընդամենը | քաղաքային | թաղային | գյուղական |
| Հայաստանի Հանրապետություն | 930 | 47 | 12 | 871 |
| ք. Երևան | 12 | - | 12 | - |
| Արագածոտն | 114 | 3 | - | 111 |
| Արարատ | 97 | 4 | - | 93 |
| Արմավիր | 97 | 3 | - | 94 |
| Գեղարքունիք | 92 | 5 | - | 87 |
| Լոռի | 113 | 8 | - | 105 |
| Կոտայք | 67 | 7 | - | 60 |
| Շիրակ | 119 | 3 | - | 116 |
| Սյունիք | 113 | 7 | - | 106 |
| Վայոց Ձոր | 44 | 3 | - | 41 |
| Տավուշ | 62 | 4 | - | 58 |

2001թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3802,4 հազ. մարդ: Հանրապետության առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-2000թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակը մոտ 644 հազ. մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Ուստի ՀՀ առկա բնակչության թվաքանակն արտահոսքի հետևանքով զգալիորեն պակաս է:

Հարկ է նշել, որ սկսած 2000թ. մայիս ամսից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով, իսկ հունիս ամսից՝ ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ՝ Բավրա, Գոգավան, Բագրատաշեն և Մեղրի սահմանային հատման կետերից: Այսպիսով, 2000թ. հունվար-դեկտեմբերին բոլոր տեսակի տրանսպորտային միջոցներով հանրապետությունից մեկնողների և ժամանակողների հաշվեկշիռը բացասական է եղել 52.6 հազ. մարդով, այդ թվում օդային տրանսպորտով՝ 25,7 հազ. մարդ, երկաթուղային տրանսպորտով՝ 13,3 հազ. մարդ և ավտոտրանսպորտով՝ 13.6 հազ. մարդ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՊԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ մարզերի, 2001թ. հունվարի 1-ի դրությամբ

(հազ. մարդ)

| Մարզեր | Ընդամենը | Քաղաք | Գյուղ |
|----------------------------------|---------------|---------------|---------------|
| Հայաստանի Հանրապետություն | 3802,4 | 2532,3 | 1270,1 |
| ք. Երևան | 1247,2 | 1247,2 | - |
| Արագածոտն | 167,8 | 47,1 | 120,7 |
| Արարատ | 311,2 | 98,9 | 212,3 |
| Արմավիր | 322,9 | 123,1 | 199,8 |
| Գեղարքունիք | 278,6 | 102,1 | 176,5 |
| Լոռի | 393,4 | 263,8 | 129,6 |
| Կոտայք | 329,0 | 200,6 | 128,4 |
| Շիրակ | 362,1 | 243,0 | 119,1 |
| Սյունիք | 164,1 | 115,2 | 48,9 |
| Վայոց Ձոր | 69,4 | 28,5 | 40,9 |
| Տավուշ | 156,7 | 62,8 | 93,9 |

Բնակչության ընդհանուր թվաքանակի 26,2%-ը կազմել է աշխատունակ տարիքից ցածր, 59,9%-ը՝ աշխատունակ տարիքի, իսկ 13,9-ը՝ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը: Տարեցտարի ավելանում է աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը, որը և իր ազդեցությունն է թողնում բնակչության «ծերացման» վրա: Նշված հարաբերակցությունը բնակչության թվաքանակում հանգեցնում է աշխատունակ տարիքի վրա ծանրաբեռնվածության մեծացմանը, այսինքն՝ ամեն աշխատունակ տարիքի 1000 բնակչին բաժին են ընկնում մոտ 700 ծերեր և երեխաներ:

Համաձայն «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի, 2001թ. համար հանրապետությունում աշխատանքային կենսաթոշակային տարիք է համարվում կանանց համար՝ 58, իսկ տղամարդկանց համար՝ 63 տարին:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռատարիքային կազմի 2000թ. և 2001թ. տարեսկզբի դրությամբ

(հազ. մարդ)

| | 2000 | | | 2001 | | |
|--|---------------|---------------|---------------|---------------|---------------|---------------|
| | ընդամենը | կին | տղամարդ | ընդամենը | կին | տղամարդ |
| Ամբողջ բնակչությունը այդ թվում՝ | 3803,4 | 1954,4 | 1849,0 | 3802,4 | 1953,9 | 1848,5 |
| 0-4 | 212,8 | 99,9 | 112,9 | 212,9 | 99,7 | 113,2 |
| 5-9 | 327,8 | 159,0 | 168,8 | 327,0 | 160,2 | 166,8 |
| 10-14 | 380,9 | 185,7 | 195,2 | 380,2 | 185,6 | 194,6 |
| 15-19 | 365,0 | 178,4 | 186,6 | 365,0 | 177,8 | 187,2 |
| 20-24 | 317,7 | 155,4 | 162,3 | 315,6 | 156,3 | 159,3 |
| 25-29 | 283,2 | 138,7 | 144,5 | 281,4 | 138,8 | 142,6 |
| 30-34 | 278,8 | 143,0 | 135,8 | 277,6 | 142,6 | 135,0 |
| 35-39 | 322,9 | 170,5 | 152,4 | 323,2 | 170,0 | 153,2 |
| 40-44 | 310,4 | 164,7 | 145,7 | 311,8 | 164,1 | 147,7 |
| 45-49 | 229,4 | 123,3 | 106,1 | 228,2 | 123,1 | 105,1 |
| 50-54 | 152,2 | 82,7 | 69,5 | 152,1 | 82,1 | 70,0 |
| 55-59 | 114,5 | 63,2 | 51,3 | 114,1 | 62,5 | 51,6 |
| 60-64 | 170,8 | 94,2 | 76,6 | 171,1 | 93,8 | 77,3 |
| 65-69 | 127,5 | 71,0 | 56,5 | 133,1 | 70,3 | 62,8 |
| 70-74 | 115,7 | 65,3 | 50,4 | 114,1 | 66,4 | 47,7 |
| 75-79 | 48,0 | 30,4 | 17,6 | 49,4 | 31,3 | 18,1 |
| 80-84 | 22,6 | 14,9 | 7,7 | 22,8 | 15,6 | 7,2 |
| 85 և բարձր | 23,2 | 14,1 | 9,1 | 22,8 | 13,7 | 9,1 |

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող որոշիչ գործոնը մինչև 2000թ.-ը բնակչության բնական աճն էր, որի հաշվին էլ բացառապես տեղի էր ունենում բնակչության թվաքանակի ավելացումը: Սակայն բնակչության միգրացիայի բացասական ցուցանիշն իր ազդեցությունը թողեց 2000թ. հունվար-դեկտեմբերի մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի վրա՝ գերազանցելով բնակչության բնական աճը 1,0 հազ.մարդով¹:


Հանրապետությունում բնական աճի պատկերը

(մարդ)

| | Հունվար-դեկտեմբեր | | | 1000 բնակչի հաշվով | | |
|---|-------------------|--------|--------|--------------------|-------------------|-------------------|
| | 1998թ. | 1999թ. | 2000թ. | 1998թ. | 1999թ. | 2000թ. |
| Ծնվածներ այդ թվում՝ | 39366 | 36502 | 34163 | 10,4 | 9,6 | 9,0 |
| տղա | 21176 | 19758 | 18492 | 11,5 | 10,7 | 10,0 |
| աղջիկ | 18190 | 16744 | 15671 | 9,3 | 8,6 | 8,1 |
| Մահացածներ այդ թվում՝ | 23210 | 24087 | 23842 | 6,1 | 6,3 | 6,3 |
| տղամարդ | 12048 | 12335 | 12210 | 6,5 | 6,7 | 6,7 |
| կին | 11162 | 11752 | 11632 | 5,7 | 6,0 | 6,0 |
| Մահացածներից մինչև 1 տարեկան այդ թվում՝ | 580 | 572 | 533 | 14,7 ² | 15,4 ² | 15,6 ² |
| տղա | 348 | 343 | 322 | 16,4 | 17,2 | 17,4 |
| աղջիկ | 232 | 229 | 211 | 12,8 | 13,4 | 13,6 |
| Բնական աճ | 16156 | 12415 | 10321 | 4,3 | 3,3 | 2,7 |
| Անուանություններ | 11365 | 12459 | 10915 | 3,0 | 3,3 | 2,9 |
| Անուանալուծություններ | 1612 | 1253 | 1341 | 0,4 | 0,3 | 0,4 |

2000թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բնակչության բնական աճը, որն ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության (որտեղ բնական աճը բացասական է, իսկ միգրացիոն աճը՝ դրական), դրական է, այսինքն՝ ծնունդները գերակշռում են մահերին, 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 16,9 տոկոսով, որը պայմանավորված է հիմնականում ծնունդների նվազմամբ՝ 6,4 տոկոս:

Ծնվածների և մահացածների թվաքանակը հունվար-դեկտեմբեր



¹ Ըստ բնական աճի և հաշվառումից դուրս եկածների (ՀՀ ՆԳՆ տարածքային անձնագրային ծառայությունների տվյալներով) տարբերության:

² 1000 կենդանածնի հաշվով:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՊԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի

(մարդ)

| Մարզեր | Ծնվածներ | Մահացածներ | Մինչև 1 տարեկան մահացածներ | Բնական աճ | Ամուսնություններ | Ամուսնալուծություններ |
|----------------------------------|--------------|--------------|----------------------------|--------------|------------------|-----------------------|
| Հայաստանի Հանրապետություն | 34163 | 23842 | 533 | 10321 | 10915 | 1341 |
| ք. Երևան | 10463 | 8453 | 172 | 2010 | 4034 | 751 |
| Արագածոտն | 1668 | 981 | 28 | 687 | 474 | 27 |
| Արարատ | 2823 | 1756 | 45 | 1067 | 701 | 76 |
| Արմավիր | 3078 | 1841 | 35 | 1237 | 941 | 86 |
| Գեղարքունիք | 2732 | 1601 | 43 | 1131 | 857 | 23 |
| Լոռի | 3393 | 2649 | 57 | 744 | 854 | 103 |
| Կոտայք | 2951 | 1689 | 52 | 1262 | 932 | 89 |
| Շիրակ | 3006 | 2295 | 52 | 711 | 929 | 89 |
| Սյունիք | 1738 | 1067 | 18 | 671 | 426 | 57 |
| Վայոց Ձոր | 703 | 403 | 15 | 300 | 245 | 14 |
| Տավուշ | 1608 | 1107 | 16 | 501 | 522 | 26 |

Ծնելիության մակարդակի նվազման պայմաններում կտրուկ իջել են կանանց ծնելիության տարիքային գործակիցների ցուցանիշներն ինչպես տարիքային առանձին խմբերում, այնպես էլ ամբողջովին վերցված: Այսպես, 100 պտղաբեր տարիքի կանանց հաշվով (15-49 տարեկան) միջինում բաժին է ընկել 105-110 երեխա՝ բնակչության վերարտադրության համար անհրաժեշտ 215-ի դիմաց:

Բնակչության վերարտադրությունը բնութագրող կարևոր ցուցանիշներ են հանդիսանում նաև ծնելիության բրուտո¹ և նետո² գործակիցները: Ինչպես վկայում է բնակչության վերարտադրության բրուտո և նետո գործակիցների դինամիկան, որը համապատասխանաբար կազմել է 1990թ. 1.277 և 1.237; 1995թ.՝ 0.798 և 0.780, 1999թ.՝ 0.585 և 0.573:

Այսինքն նշված ցուցանիշները փոքր են 1-ից, այլ կերպ ասած, չի ապահովվում բնակչության ոչ միայն ընդլայնված, այլև պարզ վերարտադրությունը (2000թ.-ին նշված ցուցանիշները նույնպես կնվազեն՝ կապված ծնելիության մակարդակի նվազման հետ):

Վերարտադրության կարևոր ցուցանիշներից է կյանքի սպասվելիք տևողությունը՝ հաշվարկած ծննդից: Այսպես, 1999թ. այն կազմել է 73.2 տարի, այդ թվում տղամարդկանց մոտ՝ 70.7, կանանց մոտ՝ 75.5, 1998 թվականի, համապատասխանաբար՝ 74.7, 70.8 և 78.1 դիմաց:

Բնակչության բնական շարժի մյուս կարևորագույն ցուցանիշը մահացությունն է: 2000թ. հունվար-դեկտեմբերին, թերևս, մահացածների բացարձակ թվաքանակը նվազել է, սակայն, մահացության գործակիցը մնացել է 1999թ. համապատասխան ժամանակաշրջանի մակարդակին: Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (որում գերակշռել է մահացությունը սրտի իշեմիկ հիվանդություններից՝ 66,2 տոկոս) և չարորակ նորագոյացություններից, հատկապես մարսողական և շնչառական օրգանների, իսկ կանանց մոտ կրծքագեղձի հիվանդությունից մահացության մակարդակը հանրապետությունում բարձր է, և տարեցտարի աճում է:

¹ Միջին հաշվով քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը:

² Միջին հաշվով քանի աղջիկ երեխա է ծնել մեկ կինը, որոնք հասել են մոր տարիքին:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մահացությունն ըստ պատճառների
(ՀՀ ՔԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված մահվան ակտերի հիման վրա)

(մարդ)

| | 1999թ. հունվար- դեկտեմբեր | տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ | 2000թ. հունվար- դեկտեմբեր | տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ |
|--|---------------------------------|---------------------------------------|---------------------------------|---------------------------------------|
| Մահացածների թիվը | 24087 | 100 | 23842 | 100 |
| դրանցից՝ ըստ պատճառների. | | | | |
| արյան շրջանառության համակարգի հիվանդություններից | 13065 | 54,2 | 13109 | 55,0 |
| դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից | 1114 | 4,6 | 1084 | 4,6 |
| դրանցից. | | | | |
| ինքնասպանությունների սպանություններ | 67 | 0,3 | 54 | 0,2 |
| 98 | 0,4 | 89 | 0,4 | |
| նորագոյացություններից | 3976 | 16,5 | 3981 | 16,7 |
| շնչառական օրգանների հիվանդություններից | 1458 | 6,1 | 1365 | 5,7 |
| մարսողական օրգանների հիվանդություններից | 795 | 3,3 | 814 | 3,4 |
| վարակիչ և մակաբուծական հիվանդություններից | 310 | 1,3 | 260 | 1,1 |
| այլ հիվանդություններից | 3369 | 14,0 | 3229 | 13,5 |

2000թ. հունվար-դեկտեմբերին կյանքի առաջին տարում երեխաների մահացության պատճառների կառուցվածքում պերիմատալ շրջանում առաջացած վիճակից (կյանքի առաջին շաբաթում) և բնածին արատներից, այսինքն այն հիվանդություններից, որոնք սերտորեն կապված են մոր առողջական վիճակի հետ, մահացությունը դեռևս բարձր է և 2000թ. հունվար-դեկտեմբերին այն կազմել է 66,4 տոկոս:


2000թ. հունվար-դեկտեմբերին մինչև 5 տարեկան երեխաների մահացության կառուցվածքում գերակշռում է մինչև 1 տարեկանների մահացությունը (81,7 տոկոս): Հարկ է նշել նաև, որ մահացությունը մինչև 5 տարեկանների մոտ (1000 կենդանածնի հաշվով) կազմել է 19,4 պրոմիլ՝ տղա երեխաների մոտ այս ցուցանիշն ավելի բարձր է:

Հանրապետությունում մայրական մահացության ցուցանիշը (100000 կենդանածնի հաշվով) 1999թ. հունվար-դեկտեմբերին հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում գրանցվել է մահացության 12 դեպք, որով պայմանավորված, մայրամահացության գործակիցը կազմել է 32,9; իսկ 2000թ. հունվար-դեկտեմբերին 52,7 (18 դեպք): Հարկ է նշել, որ միայն հուլիսին տեղի է ունեցել մայրամահացության 4 դեպք:

2000թ. հունվար-դեկտեմբերին գրանցված ամուսնությունների քանակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 12,4 տոկոսով և կազմել 10915, իսկ ամուսնալուծությունների քանակը աճելով 7 տոկոսով կազմել է 1341:

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՎԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Գրանցված ամուսնությունները և ամուսնալուծությունները



Հանրապետությունում 2000թ. հունվար-դեկտեմբերին 1000 նոր կազմավորվող ամուսնական զույգերին բաժին է ընկել 123 ամուսնալուծություն:

Վերջին տարիներին անձնագրային ռեժիմի թուլացման, ինչպես նաև սահմանային անցման կետերում միգրանտների հաշվառման համակարգի անկատարելիության պայմաններում նրանց զգալի մասը դուրս է մնում վիճակագրության տեսադաշտից:

Միգրացիայի ծավալներն ավելի իրատեսական գնահատելու նպատակով անցկացվել են մի շարք հետազոտություններ, ինչպես նաև ուսումնասիրվել են ավիացիայի միջոցով ուղևորափոխադրումների ծավալները:

Ուղևորափոխադրումների ծավալները 1992-2000թթ., ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների

(հազ. մարդ)

| Տարիները | Մեկնել են | Ժամանել են | Միգրացիոն աճը (+,-) |
|----------|-----------|------------|---------------------|
| 1992 | 865,5 | 636,9 | -228,6 |
| 1993 | 831,0 | 689,9 | -141,1 |
| 1994 | 597,8 | 470,0 | -127,8 |
| 1995 | 507,0 | 469,5 | -37,5 |
| 1996 | 517,4 | 496,9 | -20,5 |
| 1997 | 504,9 | 473,6 | -31,3 |
| 1998 | 439,7 | 415,3 | -24,4 |
| 1999 | 318,6 | 311,6 | -7,0 ¹ |
| 2000 | 318,4 | 292,7 | -25,7 |

Ինչպես երևում է աղյուսակից, նախորդ 8 տարիների ընթացքում օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողների թվաքանակին 643,9 հազ. մարդով¹, սակայն սա ամբողջական պատկերը չէ, քանզի, տրանսպորտի այլ տեսակներով՝ երկաթուղով և ավտոտրանսպորտային միջոցներով ուղևորափոխադրումների

¹ «ՀՀ սոցիալ տնտեսական վիճակը 2000թ. հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական-վերլուծական ամսական զեկույցում հրատարակված 1999թ. տվյալները (էջ 125 և 127) ճշգրտվել են ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից 15.01.2001թ. ներկայացված ամփոփ հաշվետվության ճշգրտված տվյալների:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


վերաբերյալ տվյալներն առկա են երկաթուղով 2000թ. հունվար-դեկտեմբերին, իսկ ավտոտրանսպորտային միջոցներով մայիս-դեկտեմբեր ամիսներին:

Ըստ «ՀՀ Երկաթուղի» դեպարտամենտի հաշվառած տվյալների, հանրապետությունից մեկնողների թվաքանակը (19.4 հազ.) գերազանցել է ժամանողների թվաքանակը (6.1 հազ.) 13.3 հազ. մարդով: Ըստ ՀՀ Ազգային անվտանգության նախարարության սահմանապահ զորքերի վարչության (Գոգավան և Բագրատաշեն), ՀՀ պետական եկամուտների նախարարության մաքսային վարչության (Բավրա) և Մեղրիի սահմանային կետերի հաշվառած տվյալների, մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողների թվաքանակը 13.6 հազ.մարդով:

Օդային տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալները 1999թ. և 2000թվականներին, ըստ ամիսների

| | 1999 | | | 2000 | | |
|------------------|--------------|--------------|-------------------------|--------------|--------------|--------------------|
| | Մեկնել են | Ժամանել են | միզրացիոն աճ (+,-) | Մեկնել են | Ժամանել են | միզրացիոն աճ (+,-) |
| Հունվար | 22,3 | 18,3 | -4,0 | 21,9 | 16,0 | -5,9 |
| Փետրվար | 19,2 | 19,2 | 0 | 18,8 | 15,4 | -3,4 |
| Մարտ | 19,9 | 20,4 | +0,5 | 17,9 | 16,6 | -1,3 |
| Ապրիլ | 22,9 | 20,9 | -2,0 | 21,4 | 19,0 | -2,4 |
| Մայիս | 24,4 | 22,6 | -1,8 | 22,9 | 19,5 | -3,4 |
| Հունիս | 27,5 | 30,8 | +3,3 | 27,0 | 28,3 | +1,3 |
| Հուլիս | 34,3 | 33,8 | -0,5 | 32,3 | 30,4 | -1,9 |
| Օգոստոս | 44,6 | 35,5 | -9,1 | 43,6 | 32,1 | -11,5 |
| Սեպտեմբեր | 29,9 | 29,4 | -0,5 | 31,6 | 27,2 | -4,4 |
| Հոկտեմբեր | 25,0 | 25,9 | +0,9 | 27,7 | 25,1 | -2,6 |
| Նոյեմբեր | 22,7 | 22,9 | +0,2 | 24,2 | 24,9 | +0,7 |
| Դեկտեմբեր | 25,9 | 31,9 | +6,0 | 29,1 | 38,2 | +9,1 |
| ԸՆԴԱՄՆՆՆԸ | 318,6 | 311,6 | -7,0¹ | 318,4 | 292,7 | -25,7 |

Օդային տրանսպորտով ժամանողների և մեկնողների տարբերությունը 1999 և 2000 թվականներին՝ ըստ ամիսների



Ընդհանուր առմամբ, 1999թ. 12 ամիսների ընթացքում մեկնողների թվաքանակը գերազանցել է ժամանողների թվաքանակը 7,0 հազ. մարդով, իսկ 2000թ. հունվար-դեկտեմբերին այն կազմել է 25,7 հազ. մարդ, ինչը 3,7 անգամով գերազանցել է 1999թ. համապատասխան ցուցանիշը: Հատկանշական է, որ և 1999թ. և 2000թ. հունիսին և դեկտեմբերին ժամանողների

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԱՂԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

թվաքանակն է գերազանցել մեկնողների թվաքանակը, որը պայմանավորված է ամառային ամիսներին, ինչպես նաև Սուրբ ծնունդի ու Ամանորի կապակցությամբ հարազատներին այցելությամբ:

Ըստ 1998-99թթ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված «Միգրացիայի ընտրանքային հետազոտության» տվյալների, էմիգրացիայի հիմնական դրդապատճառն աշխատատեղերի բացակայությունն է, բավարար կեսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը, Հայաստանում տնտեսության զարգացման հեռանկարների նկատմամբ հավատի բացակայությունը, սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը:

2001-2002թթ. ՀՀ արտաքին միգրացիայի երևույթի ուսումնասիրման նպատակով ՀՀ ԱՎԾ-ն Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄՍ ծրագրի «Միգրացիայի հետազոտություն» նախագծի շրջանակում անցկացնում է ուսումնասիրություն: Նշված հետազոտությունը հնարավորություն կտա գնահատելու միգրացիայի իրական չափերը, սեզոնայնությունը, աշխատանքային միգրացիայի ծավալները և այլն: Ուսումնասիրությունը շարունակական է և ներառելու է տարվա 12 ամիսները՝ յուրաքանչյուր ամսվա 5 օրը՝ սահուն ժամանակացույցով: Ուսումնասիրությունն անց է կացվելու հանրապետության բոլոր օդային և ցամաքային սահմանային կետերում: